

**ՅԱՂԱԳՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԻՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ.  
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, ԹԷ<sup>°</sup>  
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ**

ԱՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ  
anna\_arevshatyan@hotmail.com

Հայ միջնադարեան «ձայնից» մեկնութիւնների շարքում իր կայուն տեղն ունի Յաղաց Գիտութեան Ձայնից մեկնութիւնը<sup>1</sup>, որը երաժշտագիտ Նիկողոս Թահմիգեանը (1926-2011) վերագրել է Ժ. դարի յայտնի մատենագիր, ծխագէտ, մանկավարժ՝ Նարեկայ Կանքի վանահայր Անանիա Նարեկացուն<sup>2</sup>: Սակայն մեր ուսումնամիջութիւնը թոյլ է տախս ենթադրելու, որ այդ մեկնութեան հեղինակը է դարի հանրագիտակ գիտնական, նշանաւոր թուաբանագիր, աստղագետ, աշխարհագրագետ, շարականագիր և երաժշտութեան տեսաբան Անանիա Շիրակացին է:

Մեր վարկածը հիմնուած է հետեւեալ տրամաբանութեան վրայ: Նուիրուելով հիմնականում քառեակ գիտութիւնների ոլորտին, որի մեջ էր մտնում նաև երաժշտութիւնը, Շիրակացին, քաջատեղեակ է եղել նորպիւրագորականների գիտական նուաճումներին: Նա իրականացրել է Նիկոմախոս Գերազացու թուաբանական տասնական աղիւսակի հայկական տարբերակը, աղիւսակ, որի տառանդամներն ունեն նաև երաժշտատեսական մեկնութիւն, գրադուել է հեշինաբանութեան (ակուստիկայի) հարցերով, ուստի չէր կարող շրջանցել նաև ութայն համակարգի տեսութիւնը: Ուշագրաւ է Շիրակացու որպէս երաժշտութեան գեղագիտի երկնային ոլորտների ներդաշնակութեան (harmonia mundi) պլատոնական տեսութեանը յարող յայտնի ասոյթն: «զզայարակներն առաջնոցն սուր էին քան զայժմոց զոր վկայեն բազումը վասն որոյ ոչ միայն զարեգականն զնաց կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորչացս կարացին դիտել եւ ճանաչել: Եւ ոչ միայն զորպիտութիւն զնացիցն այլեւ զնիշումն ձայնից նոցա: Եւ ի սոցանէ զուար արուեստ երաժշտականութեան աշխարհի»<sup>3</sup>:

Շարականագիրների միջնադարեան ցուցակները Շիրակացուն են ընծայում Յարութեան ամբողջ հարցնակարգը («զՅարութեան հարցնակարգն զրովանդակն՝ Անանիա Շիրակացին»<sup>4</sup>), ինչպէս նաև՝ մի շարք այլ շարականներ, որոնք այսօր եւ երգում են հայ եկեղեցում: Դրանց թուում «Վասն Սերոյ Փրկութեան» Հանգստեան Կարգի ծանր ողորմեան, Կարդավարի առաջին օրուայ կանոնի «Ուրախացիր, Պանկ Կուսից» ճաշուն, Մըրոց Թարգմանչաց իին կանոնի մի մասը են::

«զՅարութեան հարցնակարգեալ զբովանդակե» արտայայտութիւնից պէտք է հասկանալ, որ Շիրակացին իրականացրել է ծխակարգի պահանջներից բխող ստեղծագործական մի ծրագիր, որն ընդգրկում էր ուրծային բոլոր ձայնեղանակներում երգուող հարցերի յօրինումը: Այդ ծրագիրը համեմատելի է դարձեալ զատկական շաբաթուայ համար նախատեսուած եւ նոյնպէս ուրծային բոլոր ձայնեղանակներն ընդգրկող Ստեփանոս Սինեցու (660/670-735) 80 երգից բաղկացած Աւագ Օրինութիւնների շարքի ստեղծման հետ: Ֆիշենք, որ Է.-Ը. դարերում ուրծային համակարգի կարգաւորութիւնը ողջ արեւելաքրիստոնէական աշխարհի - այդ թուու նաև Հայ Եկեղեցու - հրատապ խնդիրներից էր: Այդ գործին իր մասնակցութիւնն էր բերել, օրինակ, Շիրակացու ժամանակակիցներից Բարսեղ Ճռեր, որը Ներսէս Տայեցի (Է. դար) կաթողիկոսի հրամանով շրջել է Հայաստանի տարբեր զաւառներով, Եկեղեցական երգեցողութիւնը միակերպութեան բերելու նպատակով: Դրա արդիւնքում նա կազմեց արդէն շրջանառութեան մէջ եղած հոգեւոր երգերի Ճռենսիր ժողովածուն, որը, բնականաբար, պէտք է զաղափարուած լիներ ըստ ուրծային համակարգի, այդպիսով իհմը դառնալով Ստեփանոս Սինեցու կարգաւորած ապազայ Շարակենոցի համար: Այսինքն, շարականագիրների միջնադարեան ցուցակների հալորդած միահամուռ տեղեկութիւնը Շիրակացու Յարութեան ողջ հարցնակարգի հեղինակ լինելու մասին, մատնանշում է ծանրակշիռ ստեղծագործական եւ միաժամանակ տեսական ծրագիր:

Այժմ ներկայացնենք խնդրոյ առարկայ մեկնութիւնը:

Ուշագրաւ է մեկնութեան վերնագիրը «Յաղագս Գիտութեան Զայնից», ինչը որեւէ այլ «Ճայնից» մեկնութեան մէջ չի հանդիպում ընդուուպ մինչեւ Գրիգոր Գապասակալեան, որն ընկալում էր ձայնագիտութիւնը իբրեւ զիտութիւն, այն էլ «զադտնի զիտութիւն»<sup>5</sup>: Դա մէկ կողմից բնորոշում է Շիրակացու ձայնեղանակների տեսութեան ընկալումը որպէս զիտութիւն, միւս կողմից միանգամայն համահունչ է նորալասունականների-նորափիքագրուեանների առաջ քաշած ձայնեղանակների տեսութեան հայեցակարգին:

Մեկնութեան մէջ Շիրակացին իրեն դրսեւորում է որպէս Եկեղեցական ծեսին քաջատեղեակ հեղինակ եւ շարականագէտ: Եկեղեցական կանոններից յիշատակուած են տաճարի նաւակատիրը, պղծուած տաճարի մաքրագործման կանոնը, Եկեղեցօքինները եւ խաչօքինները, իսկ համարքիստոննական երգասացութիւններից «Փառք Ի Բարձունս»ը, «Աւրինեսցոր զՏէր» օրինութիւնը եւ հարցը, ինչպէս նաև «Հաւատամք»ը եւ «Միածին»ը: Վերջին երկուսի մասին հեղինակը յայտնում է, որ դրանք հաստատել են սուրբ հայրերը՝ այսինքն, սուրբ Մաշտոցը եւ Սահակ Պարքե կաթողիկոսը:

Յիշենք «Յաղագս Գիտութան Զայնից» մեկնութեան ընագիրը. «Առաջինն յԱղամայ սկսաւ, զի նմա տուա առաջին ձայն, զոր կորոյս: Եւ Տեան մարդեղութեամբ երգեցին հրեշտակը՝ զՓառը ի բարձունս: Առաջի կողմ Սովուս երգեաց Արինեցէր գՏէր, եւ մանկութք զշարցն: Երկրորդ ձայն ի Մինեայ բարբառ փողոյն: Նոյն ձայնին աւետեցին հրեշտակը կանանցն զՅարութիւն: Երկրորդ կողմ՝ Յեսուայ է փողն շուրջ զալ զԵրիբովու, Սամուէլ եւ դասր մարզարէցին: Երրորդ ձայն Դաիթ եւ դասր երգացն եւ Սուրբ Հոգին ի վերնատանն յառաքեալս: Երրորդ կողմ՝ Սովուս ի նաւակատիսն խորանին եւ Սողոմոն ի նաւակատիսն տաճարին: Չորրորդ ձայն՝ Եզրաս ի զալն Երուսաղէմ եւ նուազելն ի տաճար: Յայս ձայնս զՀաւատամբն եւ զՄիածինն եղին սուրբ հարքն: Չորրորդ կողմ՝ զուածարին պղծին սրբէն: Նովին՝ Եկեղեցարիներն եւ խաչարիներն: Խոկ ստեղն՝ Եսայի լուա զրովքից սրբասացութիւն: Ընդ ամենայն ժ, որ է թի կատարեալ, վասն զի ժ աստիճանաւ եւ ժ ձայնի պատուեց Աստուած զանմարմինս եւ զմարմնաւրսն, զոր յիմանալի աշխարհ բաղկացոյց ժ դասր արհնաբանիչս իւր, եւ կարգապետեալ յիմանալի խորանին, յորոյ մինն սոտրանկեալ անարժան զուա աւրինելոյնք:

Աշխարհաբար բարգմանութեամբ՝ «Առաջին ձայնեղանակը սկիզբ առաւ Աղամից, քանզի նրան էր տուել [Աստուած] առաջին ձայնը, որն այն կորցրեց: Եւ հրեշտակները երգեցին Տիրոց մարդեղութիւնը՝ Փառը Ի Բարձունս: Առաջին կողմ եղանակը Սովուս երգեց՝ Օրինեցէր Տիրոց եւ մանուկները՝ Հարցնը: Երկրորդ ձայնեղանակը նման է Մինայի փողի ձայնին: Նոյն ձայնեղանակում հրեշտակներն աւետեցին [իւղաբեր] կանանց [Տիրոց] Յարութիւնը: Երկրորդ կողմ եղանակը նման է Յեսուի փողին, որը պստուս էր Երիբովի շուրջը՝ Սամուէլի եւ մարզարէների դասի հետ: Երրորդ ձայնեղանակը [յիշեցնում է] Դաւթին եւ երգիչների խմբերը եւ Սուրբ Հոգին, որն իշաւ առաքեալների վրայ վերնատանը: Երրորդ կողմը [երգեցին] Սովուսը՝ խորանի նաւակատիքին եւ Սողոմոնը տաճարի նաւակատիքին: Չորրորդ ձայնեղանակը (երգեց) Եզրասը, զալով Երուսաղէմ եւ նուազելով տաճարում: Այս ձայնեղանակում սուրբ հայրերը կարգեցին [երգել] «Հաւատամբ»ը եւ «Միածին»ը: Չորրորդ կողմը [երգում են] սրբելով պղծուած տաճարը: Նոյնով՝ Եկեղեցօրիները եւ Խաչօրիները: Խոկ ստեղիներում Եսային լսեց սերովքների սրբասացութիւնը: Ընդամենը տասը, որը կատարեալ թի է, որովհետեւ տասն աստիճանով եւ տասը ձայնեղանակներով Աստուած պատուեց անմարմիններին եւ մարմնաւրներին, որ իր օրինաբանիչների տասը դասերից սուեղծեց աննիւթական, հոգեւոր, բանականութեամբ ձանաշէլի աշխարհակերպ կարգելով աննիւթական խորանը, մեկին սոտրենկեց արեց, օրինելուն անարժան զունելով»:

Վերջին պարբերութիւնը համընկնում է Խորենացու «Յաղագ Կարգաց Եկեղեցւոյ» երկի ձայնեղանակների մեկնութեան եղրափակիչ հասուածին. «որ զիմանալի աշխարհն բազկացոյց, տասն բուռվր արինաքանիչս իր կարգապետեաց իմանալի խորանին, յորոց մինն սուոր անկնայ, յաւրինեկոյն զԱսուուած անարժան ցուաւ»<sup>8</sup>.

Բոլոր ձեռագրերում, որը գտնում ենք «Յաղագ Գիտութեան Զայնից» մեկնութիւնը, բերում է «Անանիայի Վարդապետի Յաղագ Գիտութեան Զայնից» խորագիրը՝ առանց որեւէ որոշակիացման: Թահիմզեանը ընծայել է այդ գրուածքը Անանիա Նարեկացուն, չփաստարկելով իր վարկածը: Մեր կարծիքով, աւելի քան տրամաբանական է այդ մեկնութիւնը Վերագրել Շիրակացուն, որը լինելով հմուտ շարականագիր եւ ձայնագէտ, հանդիսանում է այդ մեկնութեան իսկական, իրական հեղինակը:

Ուշագրաւ է, որ Շիրակացու սեփական շարադրանքին հետևում է բառացիօրեն մեջբերուած «Յաղագ Կարգաց Եկեղեցւոյ» ձեռագրերում Խորենացուն մշտապէս ընծայուող յայտնի գրուածքը, ինչը, եթէ ընդունենք «Յաղագ Գիտութեան Զայնից» մեկնութիւնը որպէս Շիրակացու երկասիրութիւն, զայս է հաստատելու, որ «Յաղագ Կարգաց Եկեղեցւոյ» գրուածքի հեղինակը Խորենացին է, այլ ոչ Սովուս Սիւնեցին, ինչպէս պնդում է Թահիմզեանը իր «Սովուս Սիւնեցին եւ իր «Յաղագ Կարգաց» Գրուածքը» յայտնի յօդուածում<sup>9</sup>, փոխարինելով բոլոր ձեռագրերում անհստիր կրկնուող «Սովուս Քերթողահօր» շատ որոշակի արտայայտուած հեղինակային պատկանելիութեան ցուցումը «Սովուսի Քերթողի» այսինքն, Սիւնեցու անունով:

Բնական է, որ ոսկեդարեան աւանդոյթների ժամանգորդ Շիրակացու համար մեծագոյն հեղինակութիւն պէտք է լիներ ժամանակագրական առումով իրեն բարեկան մօտ ապրած պատմահայր եւ շարականագիր Խորենացին: Այդ է պատճառը, որ նա սեփական «Ճայնից» մեկնութեանը կցել է նրա «Յաղագ Կարգաց» երկի ձայնեղանակների մեկնութեանը նուիրուած մասը, հաւանաքար, բարձր գնահատելով այդ երկի արժանիքները եւ նրանու արծարծուած աստուածաբանական, ծիսագիտական, ձայնագիտական եւ գեղագիտական հարցերի կարեւորութիւնը:

Այսպիսով, ըստ մեր առաջարկած տեսակետի, Շիրակացու երկասիրութիւնների ցանկին կարելի է յաւելել «Յաղագ Գիտութեան Զայնից» մեկնութիւնը, որը նրա մտածողութեան համապարփակ լինելու յաւելեալ մի ապացոյց է, ներկայացնելով նրան որպէս իր ժամանակի հանձարեղ գիտնական եւ արուեստագէտ:

<sup>1</sup>Տե՛ս՝ Մաշտոցի անուած Մատենադարան (ՄՄ), ձեռ. 1719: Այդ մեկնութեանն անդրադարձել ենք բազմից, չբարձրացնելով, սակայն, հեղինակային պատկանելութեան հարցը (Ա. Արեւածան, Հայ Միջնադարեան «Զայնից» Մեկնութիւններ, Երևան, 2003, էջ 56, 78, 120-121. ևաեւ՝ Զայնեղանակների Ռւսութեան Միջնադարեան «Զայնից» Մեկնութիւններ, Երևան, 2013, էջ 81-86, 218-219. ևաեւ՝ A. Arevshatian, “Armienskie Srednevekovie ‘Tolkovania Na Glas’ I Ikh Paralleli V Blijnevostochnikh Muzikalno Esteticheskikh Traktatatakh” (Հայ միջնադարեան «Զայնից» մեկնութիւնները և նրանց գուգահեռները բիզանտական գեղազիւտական երաժշտութեան մեջ), *Naookovii Visnik* (Գիտութիւնների բաներ), *Vip.* 15, Kiev, 2001, էջ 41-42. ևաեւ՝ “Po Sledam Muzikovedcheskikh Iziskanii Komitasa” (Կոմիտասի երաժշտագիտական հետազոտութիւնների հետքերով), *Aktualnie Problemii Izucheniya Tserkovno-Pevcheskogo Iskustva Naooka I Praktika, Gimnologia*, *Vip.* 6 (Հոգեւոր երգարուեստի ուսումնակրթման արդի խնդիրները. գիտութիւնների փորձ, օրինարակութիւն, Հրատ. 6), Սոսկուա, 2011 էջ 45-46. ևաեւ՝ A. S. Arevsatyan, “Les Traités Arméniens Médiévaux sur l’Interpretation des Modes Musicaux et leurs Parallèles au Proche Orient”, *Revue des Etudes Armeniennes*, Paris, t. 26, 1996-1997, էջ 360-361 ևաեւ՝ A. S. Arevsatyan, “Sur les Traces des Etudes Musicologiques de Komitas”, *Revue des Etudes Armeniennes*, Paris, t. 33, էջ 320-321:

<sup>2</sup> Սիկոռու Թահմիզեան, «Քննական Տեսութիւն Հայոց Հին Եւ Միջնադարեան Երաժշտութեան Պատմութեան», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1971, N1, էջ 56, ուր հեղինակը 87րդ ծանօթագրութեան մեջ, վկայակոչելով Ուխտանեսին, գրու է. «Անական անունով մեզ ծանօթ վարդապետներից ամենայայտելի երաժիշտն է Անական Նարեկացին. - (իսկ ինչու ոչ Շիրակացին - Ա.Ա.)»,- եւ ասուածային շնորհի պայծառացեալ, եւ ձրիք սուրբ հոգոյն արցեալ զիտութեամբ, եւ հոգեւորական երգով զեղդեմամբ զեր ի վերոյ քան զամենեսեան» (Ուխտանես Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց. Վաղարշապատ*, 1871, էջ 8): «Անական Նարեկացուն եւ Նարեկայ Վաերի երաժշտական աւանդոյթներին Թահմիզեանն անդրադարձել է ևաեւ աւելի ուշ, սակայն առանց խնդրյա առարկայ մեկնութեան արձարձման (տե՛ս Երա Գրիգոր Նարեկացին Եւ Հայ Երաժշտութիւնը Վ-ԽV դդ., Երևան, 1985, էջ 50-54):

<sup>3</sup> Անական Շիրակացի. Տիեզերականութիւններ Եւ *Sosmrap*, աշխ. Աշոտ Արքահամեան, Երևան, 1940, էջ 83-84:

<sup>4</sup> Մայր Յուղակ Հայերէն Զեռազրաց Արքոց Յակոբէանց Վակրի, Հոր. Դ. կազմեց Նորայր Ենաս. Պողարեան, Երևան, 1969, էջ 485. ևաեւ՝ Հոր. Բ. էջ 629:

<sup>5</sup> Գրիգոր Գապասակալեան, Գիրը Երաժշտական, Կոստանդնուպոլիս, Տպ. Պողոս Յովիաննեսեան, 1803, էջ 70, 82-83, 93. ևաեւ մեր յօդուածը՝ «Գրիգոր Գապասակալեանի «Գիրը Ութից Զայնից» Ձեռնարկը», «Մակրուսում Միջազգային Երաժշտագիտական Տարեգիրը», Հոր. Գ. Երևան, 2009, էջ 231:

<sup>6</sup> Արեւածան, Հայ Միջնադարեան «Զայնից», էջ 120:

<sup>7</sup> Նոյն, էջ 121:

<sup>8</sup> Նոյն, էջ 120:

---

<sup>9</sup> Նիկողոս Թահմիզեան, «Սովոր Սիւնեցին եւ իր «Յաղագ Կարգաց» Գրուածքը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1972, N 11, էջ 85-94:

WHO IS THE AUTHOR OF THE INTERPRETAION OF  
“HAGHAKES KIDUTYAN TSAYNITS”:  
ANANIA NAREKATSI OR ANANIA SHIRAKATSI?  
(SUMMARY)

ANNA AREVSHATYAN  
anna\_arevshatyan@hotmail.com

The author disputes Nikoghos Tahmizian's contention that Anania Narekatsi (10<sup>th</sup> century) was the author of the interpretation of "Haghakes Kidutyan Tsaynits."

She notes that all medieval writers who referred to the said interpretation only mentioned the first name of the author, Anania, while Tahmizian considered its author to be Anania Narekatsi without giving any explanation.

The author counter-argues that Anania Shirakatsi was the author of the said interpretation as he had a significant legacy in church music, and the style and title of the interpretation come close to the mindset of the 7<sup>th</sup> century scientist Anania Shirakatsi.